ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2025 թվականի N 1942 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 1009-Ն ԵՎ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N 1210-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 9-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպաիրավական ձև ունեցող պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության՝ հիմնադրամի կազմակերպաիրավական ձև ունեցող պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության պետական քոլեջների օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 1009-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրից հանել «և Հայաստանի Հանրապետության պետական քոլեջների օրինակելի կանոնադրությունը հաստատելու» բառերը.

2) N 2 հավելվածն ուժը կորցրած ճանաչել.

3) N 3 հավելվածն ուժը կորցրած ճանաչել.

4) 2-րդ, 2.1-ին, 2.2-րդ, 3-րդ, 3.1-ին, 5-րդ և 6-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության արհեստագործական հոսքով ավագ դպրոցներն արհեստագործական ուսումնարաններ վերանվանելու, մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1210-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վերնագրից հանել «, «Հայաստանի Հանրապետության պետական արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու» բառերը.

2) N 2 հավելվածն ուժը կորցրած ճանաչել.

3) 2-րդ, 8-րդ, 8.1-ին և 9-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

5. Սույն որոշման համաձայն պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպաիրավական ձև ունեցող պետական մասնագիտական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության հիման վրա նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցման հետ կապված փաստաթղթերի ստորագրման, հաս-

տատման լիազորությունները վերապահել ըստ մասնագիտական ուսումնական հաստատությունների ենթակայության լիազոր պետական մարմնի ղեկավարներին:

6. Սույն որոշման օրինակելի կանոնադրության հիման վրա նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցման հետ կապված պետական տուրքի գծով ծախսերը կատարվելու են համապատասխան մասնագիտական ուսումնական հաստատությունների միջոցների հաշվին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն որոշման 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը և 4-րդ կետի 2-րդ ենթակետը յուրաքանչյուր պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների մասով ուժի մեջ են մտնում սույն որոշման 8-րդ կետի համաձայն՝ դրա նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցման պահից:

8. Օրինակելի կանոնադրության հիման վրա նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը և գրանցումը պետք է իրականացվեն սույն որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 6 (վեց) ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ